

երգեր, որոց եթէ երգելու լինելիք մի հայ աշուղը մօտ, նա խկոյն իւր զիտեցած խաղերի մէկին կնմանացնէր անշուշտ, և իմ դոցա համար պարզապէս երկրորդ ձայն են ասելով կճշգրտեր, որի վերայ բարձրաձայն ծիծաղցել էիք. Ուրեմն ձեր կարծիքով հայերը բնաւ սեպհական եղանակ չունին. ուրեմն և մեր մեծագործ Հայրապետի շնորհիւ սովորած ձայնազրութիւնը միայն ձեռնոտու պիտի լինի այսուհետեւ շարականներ միմեանցից որոշելու և զրելու մէջ, իսկ երգեր ոչ բնաւ Ահա նոր հեարագիտութիւն, որ լսու կընծայէ Եղնիկ քահանայն, Եղանակների մասին խօսելով շատ ճշմարիտ էք ասել, այլ է Եւրոպական, այլ է հայկականն. և ես գորան համաձայն եմ. բայց դուք հասկանալու դ չափ, գործքով հակառակն էք արել.

Երգեր ձայնազրելու համար ասումէք. « ամենայն ձայնից կարելի է սկսել, նայելով մարդոց ձայներին, թէ ով է երգում » . ուրեմն եթէ երդը երգումէ մանուկը, ուրիշ ձայնանիշներով պիտի զրել. եթէ խռապու ծերունին՝ ուրիշ, եթէ երիտասարդը՝ ուրիշ, ափսոն որ կանաց ձայնին համապատասխան յատուկ ձայնանիշեր չէք որոշել. Այսպիսի մի կանան հայերը չունենալուց զատ, չեմ կարծում որ Եւրոպագիք էլ ունենան, և եթէ անհրաժեշտ էր սորա ունենալը, անշուշտ կամ երդարանիդ յառաջաբանի մէջ կաւելացնէիք կամ ւ ւ - ներով հաստացրած Գասագրքիդ մէջ, որ չէք արել:

Եերջացնելով յօդուածս, զարձեալ խորհուրդ կտամ այսպիսի դէպքերում զիմել միշտ ձեղանից և ինձանից հմուտ ձայնազրագէտներին առանց վշտանալոյ և առանց ինքնահաւանանութեան, որովհետեւ մի փոքրիկ սխալն անգամ ոչնչացնումէ ամբողջ աշխատութեան անունը:

Սահման Սահմանագ.

ՆԱՄՈԿ ԱՍՏԻՍԽԱՆԻՑ.

Աստրախանոյ Հայոց Եկեղեցեաց Զափարերական մատեաններից երեսում են, որ ամբողջ 1880 թուականի ընթացքում եղել են ծնունդք արուաց 64. իգաց 64. վախճանք արուաց 82. իգաց 79. այս երկուց սեռից վախճաններից 29ը թոքախտութեան են զոհուել. և պսակք 29. այս ցուցակի մէջ տեսնուումէ՝ որ երկուց սեռից վախճանը երկուց սեռից ծնունդից 33 թուով աւելի է, ուրեմն Աստրախանոյ Հայ բնակչաց թիւը 1880 թուականին 33 թուով պակասուել է, և այս Աստրախանոցի Հայերի նուազանալը վաղուց է արդէն՝ որ չափարերական մատեանները իւրաքանչիւր տարի յայտնումն մէջ, զարմանտլիւ երեսյթ. վիճակագրական տեղեկութիւններից ակնյայտնի երեսում են՝ որ շատ քաղաքներումը Հայ բնակչաց թիւը չետղհետէ յաւելանում է, իսկ Աստրախանումը պակասում, Աստրախա-

Նայ հայ բնակչաց այս զգալի նուազութիւնը մեր մէջ մի չետաքրքրական հարց է ծնեցնում: ի նկատի ունիլով պսակաց թուի 30/ց շրարձրանալը շարունակ շատ տարիներ Աստրախանու մէջ, մինչդեռ Աստրախանու վիճակային ֆոյարնակ բազմամարդ քաղաքներու մը իւրաքանչիւր տարի 50—60/ց պակաս պսակ չէ կատարուում: վասնորդյ հասնում ենք հետեւել եղրակացութեանը բուն և ամենազօրաւոր պատճառը այս տիսուր իրողութեան՝ է Աստրախանայ Հայ երիտասարդաց զարտութիւն կենցաղավարութիւնը որոնցից շատերը ապրում են սառն անտարբերութեան մէջ զէպի ազգուին զգացումները: շատերի մէջ հանգած է ամսւսնութեան փափազը: շատերը հրաժարվումն ամսւսնանալու կանանց շռայլութիւնը և մեծամեծ պահանջ ները պատճառ բերելով, թէպէտ երիտասարդները իրաւունք ունին իդական սեսի ընդհանրացած շռայլութիւնը աչաց առաջն ունինալով՝ հեռանալ ամսւսնալուց: բայց պէտք է ի նկատի ունենան և մոտածին պատկառ անօք, որ իւրեանց բոլոր վաստակները և թարմոյժերը թիւր ճանապարհաւ ոչընչացնում են անպսակ կեանքի մէջ, թառամեցնում են իւրեանց ծաղիկ հասակը և շատերը երեսուն տարիքը չլրացրած՝ մտնումն ու հողի մէջ: այսպիսի երիտասարդներին՝ որոնք իւրեանց յոռի կենցաղավարութեամբ ամօթ և նախատինք են բերում մարդկութեան և սարսափելի տրտմութիւն՝ իւրեանց ծնողաց: քաղաքիս մէջ ամեն քայլում համարեա կարելի է պատահել: Աստրախանի մէջ մի ամբողջ տարումը եթէ 30 պսակ է կուտարվում: ամսւսնացողներից ոմանք 40 կամ 50 տարիքը անցկացրած անձններ են: ոմանք օտար քաղաքացների և մեծ մասը ոչ թէ օրիորդների՝ այլ նոցա բերած հազարաւոր գումարների և մեծազին օժիտների հետն են պսակուած: Աստրախանու Հայոց այժմեան աննախանձելի զրութիւնը գուշակումէ՝ որ մի դար չանցած Հայութեան հետքն անգամ չպէտք երեկի, բայց մի և նոյն ժամանակ պէտքէ խոստովանել, որ ժողովրդի սառն և վասակար ուղղութեանը մէք հոգեռականներս անտարբերութեամբ ենք նայում, և նոյն դարմանը՝ որը թերես կարող էր փոքր ինչ սթափեցնել նոցա այդ կորստարեր թմրութիւնից՝ ի գործ չենք զնում, որ է ժամանակիս յարմար քարոզը, յորդորմունքը և խրատը, որովհետեւ քաղաքին եկեղեցեաց մէջ ամբողջ տարուայ ընթացքում միայն մեծի պահոց մի քանի կիւրակէ օրերը են ասվում քարոզ, սակայն ի՞նչ ազդեցութիւն կարող է արդեօք ունենալ մի օտարասէր և նորասէր ժողովրդի վերայ մի քանի քարոզը, մի՞թէ քարոզը պահոց կերակուր է որ միայն մեծի պահոց օրերն են ասվում: ուստի ցանկալի էր Հոգեռոր նշխանութեան քաղացը ուշագրութիւնը զրաւել այս իրողութեան վերայ, որպէս զի կարգադրուէր՝ որ հոգեռոր հոյրերը իրեւ խօստովանահայրը ժողովրդեան և տեղեակ նորա սրտին, ամենայն հանդիսաւոր և տէրունական օրերին խօսէին եկեղեցւոյ մէջ ժողովրդեան հետ: մանելով նորա սրտի ու հոգեռոյ խօսքերը և ոչ թէ կրպանի, որից նա բաւական իրաւումէ, խօսէին չէ թէ երկրորդական, այլ նորա առաջն և ամենակարևոր պարտա-

սրութեան վերայ, որով գուցէ առաջը կառնուէր ժողովրդեան այդ ող-
բալի սառնութեանը և կջերմանար նա գէպի ազգասիրութիւն, ընկերու-
թիւն, կրօնասիրութիւն, և որ առաւելն է՝ պարզասիրութիւն, որով-
չետե շռայլ կենցաղավարութիւնը թէ արանց և թէ կանաց՝ քարու-
քանդ է անում աղգոյնութիւնը և անբաւականութեան առիթ է լինում
շատ գերգաստանների մէջ:

ՅԱՀԵԿԻ ԱՐԱՋ + ԱՀԱՆԱՅ ԲԱՌԱՀԵԿԻ ԱՆ

ՆԵՐԱԿ ԿՈՂԲԻՑ 8.

Հայաստանեայց զիւզօրէից մէջ ևս բարեխսղաբար օր ըստ օրէ ըն-
գարձակվումէ մեր հայ ազգի մոտաւոր զարգացման աստիճանը՝ ինչպէս
տեսնվումէ այս մեր արզի սիրագործ Կաթուղիկոսի և Լուսաւոր գարուս
շնորհիւ:

Վասն զիւ ամեն բարեխսղաբար խորհուղ մարդը ինձ հետ շուտ կհա-
մնուի այս ասածիս, որ բաց ի քաղաքացիները խաւարի ու տպիտութեան
մէջ յամառեալ զիւզացին ևս սկսել է աչք բանալ և իմանալ իւր ազդի
գովելի յատկութիւնները և զզալ իւր անհրաժեշտ պէտքերը՝ ինչպէս
զպրոց ուսուցիչ, ուսումնակ քարոզ, ներդաշնակ երգեցողութիւն եկեղե-
ցում, թեմական վերատեսուչ, որն որ հիսական զպրոցների թիւը բազ-
մացնելով հանդերձ, նոցա ներկայ և ապագայ վիճակը բարութելու, ե-
կամուտի նոր աղբիւրներ գտնելու փոյթը ձեռքէ շի թողուր, և ազգային
հանդէս . . . , որը այս առաջին անգամ տեղի ունեցաւ Կողմ երբեմն
մէծանուն զիւզում Ս. Վարդանեանների տարեղարձի առթիւ:

Ե. յդ օրը Ս. Պատարազից զինի քահանայական գասը զգեստաւորուած՝
ժողովրդի խուռն բազմութեամբ զիմեց նորաշէն զպրոցը, որտեղ աշա-
կերտք կարդացին տօնի վերաբերեալ ճառեր, երգեցին նոյնպէս պատշաճա-
ւոր երգեր, որը գրաւեց ժողովրդի համակրութիւնն ու շնորհակալութիւնը:

Քայլց սորա հետ թողլ թոյլ տրուի ինձ յիշել տեղուցն պատւելի հո-
գաբարձութեան անընդհատ աշխատանքն ու եռանդը ևս Սոքա հանդիսին
աւելի շքեղութիւն տալու համար, մի մասնաւոր սեղան ևս պատրաստե-
ցին ոյցելուների համար, որտեղ յօգուտ զպրոցի նոցանից մի քանիւը
նորիցեցին մատ 25 սուբլի փող:

Ի նկատի ունենալով ինչպէս նորա գումարը, այսորէս և նորա շնչին
ծախը, ապա զարմանք չէ ասել, որ մեր Ա. եհշափառ և Սրբազնազյն
Կաթուղիկոսի և ամեն գործող անձանց յառաջ տարած լուսաւորութեան
և բարոյականութեան դորձն այսպիսի աղքատիկ ժողովրդի մէջ եղածը
զեռ ևս շատ է: *)

ՊՈՂՈՍ Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

(*) Ցաւումնք, որ տեղի անձկութեան պատճառով չկարողացանք տպել ողն հան-
դիսի մէջ կարդացուած ճառերը.